ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼ (անունը)
SPECIAL TOPIC: ISRAEL (the name)

I. Այս անվան նշանակությունն անհայտ է (BDB 975):
   Ա. *Էլը* Պահպանում է
   Բ. Թող *Էլը* Պահպանի (ՀԱՅՑԱԿԱՆ)
   Գ. *Էլը* Համբերում է
   Դ. Թող *Էլը* Կռվի
   Ե. *Էլը* Պայքարում է
   Զ. Նա ով պայքարում է Աստծո հետ (Ծննդ. 32:28)
   Է. Վստահելի (IDB, հատոր՝ 2, էջ՝ 765)
   Ը. Հաջողակ
   Թ. Ուրախ
II. Կիրառությունը ՀԿ-ում՝
   Ա. Հակոբի անունը (տեղը բռնող, գարշապար բռնող, BDB 25:26) փոխվեց Հաբոկ գետի մոտ հոգևոր էակի հետ գոտեմարտի բռնվելուց հետո (տես՝ Ծննդ. 32:22-32, Ելից 32:13): Հաճախ եբրայերեն անունների նշանակությունները հնչյունային խաղիկներ են, ոչ թե ստուգաբանություններ (տես՝ 32:28): Նրա անունը դառնում է Իսրայել (օր՝ Ծննդ. 35:10):
   Բ. Այն հետագայում դառնում է բոլոր իր տասներկու որդիների հավաքական անվան համար կիրառելի անուն (օր՝ Ծննդ. 32:32, 49:16, Ելից 1:7, 4:22, 28:11, 2 Օր. 3:18, 10:6):
   Գ. Այն հետագայում բնութագրելու էր նախքան ելիցը (տես՝ Ծննդ. 47:27, Ելից 4:22, 5:2) և Ելիցից հետո (տես՝ 2 Օր. 1:1, 18:6, 33:10) տասներկու ցեղերից կազմված մի ազգի:
   Դ. Սավուղի, Դավթի և Սողոմոնի միացյալ միապետությունից հետո ցեղերը բաժանվեցին Ռոբովամի իշխանության ներքո (տես՝ 3 Թագավորաց 12):
      1. նույնիսկ նախքան պաշտոնական բաժանումը սկսում է տարբերությունը (օր՝ 2 Թագ. 3:10, 5:5, 20:1, 24:9, 3 Թագ. 1:35, 4:20):
      2. կազմում է հյուսիսային ցեղերը նախքան Ասորեստանի կողմից Ք.Ա. 722թ-ին Սամարիայի անկումը (տես՝ 4 Թագավորաց17):
   Ե. Կիրառվում է Հուդայի համար մի քանի տեղերում (օր՝ Եսայի 1, Միքիա 1:15-16):
   Զ. Ասորական և Բաբելոնյան գերությունից հետո այն կրին դառնում է Հակոբի բոլոր ժառանգների համար որպես հավաքական անուն (օր՝ Ես. 17:7,9, Երեմ. 2:4, 50:17,19):
   Է. Ի տարբերություն քահանաների կիրառվում էր առանձնացված ծառայողների համար (տես՝ 1 Մնաց. 9:2, Եզրաս 10:25, Նեեմ. 11:3):